# «ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1**. «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՕ-255-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի «ծառայության անցնելու» բառերը փոխարինել «ինքնավար պաշտոն զբաղեցնելու» բառերով, «ծառայողների» բառը՝ «ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով, իսկ «ծառայության» բառը՝ «պաշտոնավարման» բառով:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հատուկ քննչական ծառայությունում պաշտոնները համարվում են ինքնավար պաշտոններ:»:

**Հոդված 3.** Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հատուկ քննչական ծառայության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանման աշխատողները և գլխավոր քարտուղարը քաղաքացիական ծառայողներ են, որոնց վրա տարածվում է <Քաղաքացիական ծառայության մասին> օրենքը:

**Հոդված 4.** Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետի «հատուկ քննչական ծառայության ծառայող» բառերը փոխարինել «հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ» բառերով.

2) 1-ին մասի 3-րդ կետի «պետական ծառայություն իրականացնող անձ» բառերից առաջ լրացնել «սույն օրենքի իմաստով» բառերը, իսկ «քննչական կոմիտեի ծառայողները» բառերը փոխարինել «քննչական կոմիտեի քննիչները» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 2-րդ գլխի վերնագրի «ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ» բառը փոխարինել «ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ» բառերով:

**Հոդված 6.** Օրենքի 5-րդ հոդվածի վերնագրի և 1-ին մասի «ծառայության

ծառայողների» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց»․

**Հոդված 7.** Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) վերնագրի «Ծառայության անցնելու» բառերը փոխարինել «Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու» բառերով.

2) 1-ին մասի «ծառայության կարող է անցնել» բառերը փոխարինել «ինքնավար պաշտոն կարող է զբաղեցնել» բառերով.

3) 2-րդ մասի «ծառայության ծառայողի պաշտոնում» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոնի» բառերով.

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոնի կարող են նշանակվել նաև սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատված և պահեստազորում հաշվառված քաղաքացին:»:

5) 4-րդ մասի «ծառայության չի կարող անցնել» բառերը փոխարինել «ինքնավար պաշտոնի չի կարող նշանակվել» բառերով.

**Հոդված 8.** Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ծառայության» բառը փոխարինել «ծառայությունում» բառով.

2) 1-ին մասի «ծառայության բարձրագույն» բառերը փոխարինել «ծառայությունում բարձրագույն» բառերով.

3) 2-րդ մասի «ծառայության գլխավոր» բառերը փոխարինել «ծառայությունում գլխավոր» բառերով.

4) 2.1-ին և 2.2-րդ մասերի «ծառայության գլխավոր» բառերը փոխարինել «ծառայությունում գլխավոր» բառերով.

5) 5-րդ մասի «ծառայության» բառը փոխարինել «ծառայությունում» բառով.

**Հոդված 9.** Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ծառայության» բառը փոխարինել «ծառայությունում» բառով.

2) 2-րդ մասի «ծառայության» բառը փոխարինել «ծառայությունում» բառով:

**Հոդված 10.** Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի «ծառայության» բառը փոխարինել «ծառայությունում» բառով:

**Հոդված 11.** Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի «ծառայության ծառայողը» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը» բառերով:

**Հոդված 12.** Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) վերնագրի և 1-ին մասի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 2-րդ մասի «ծառայության ծառայողը» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը» բառերով.

**Հոդված 13**. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ծառայության ծառայողին» բառերը փոխարինել «ծառայություն-ում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին» բառերով.

2) 1-ին մասի «ծառայության ծառայողը ծառայությունից» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը պաշտոնից» բառերով.

3) 1-ին մասի 4-րդ կետի «ծառայության ծառայողին» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին» բառերով.

4) 1-ին մասի 5-րդ կետի «ծառայությանը» բառը փոխարինել «ինքնավար պաշտոն զբաղեցնելու համար» բառերով.

5) 1-ին մասի 8-րդ կետի «ծառայության ծառայողների» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով.

6) 1-ին մասի 9-րդ հոդվածի «ծառայողի» բառը փոխարինել «հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

7) 1-ին մասի 10-րդ կետի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

8) 1-ին մասի 11-րդ կետի «ծառայության» բառը փոխարինել «աշխատանքի» բառով.

9) 2-րդ մասի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայություն-ում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով:

**Հոդված 14.** Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ծառայության ծառայողների» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով.

2)  1-ին և 4-րդ մասերում «ծառայության ծառայողներին» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով.

3) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 10-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատվելու դեպքում հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը կարող է զրկվել հատուկ քննչական ծառայության դասային աստիճանից՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ:»:

**Հոդված 15.** Օրենքի 14-րդ հոդվածի վերնագրում և 5-րդ մասում «ծառայության» բառը փոխարինել «ծառայությունում» բառով:

**Հոդված 16.** Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ծառայության» բառը փոխարինել «ծառայությունում» բառով.

2) 3-րդ մասի «ծառայողներին» բառը փոխարինել «ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով, իսկ «ծառայության» բառը՝ «պաշտոն զբաղեցնելու» բառերով.

3) 4-րդ մասի «ծառայության» բառը փոխարինել «հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու» բառերով.

4) 5-րդ մասի «ծառայողին» բառը փոխարինել «ինքնավար զբաղեցնողին» բառերով, իսկ «ծառայության» բառը՝ «պաշտոնավարման» բառով.

5) 7-րդ և 8-րդ մասերի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի»:

**Հոդված 17.** Օրենքի 3-րդ գլխի վերնագրի «ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ» բառերը փոխարինել «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ» բառերով:

**Հոդված 18.** Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) վերնագրի և 1-ին մասի «ծառայության ծառայողների» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով.

2) 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 10-րդ կետերի «ծառայության ծառայողների» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով, իսկ 4-րդ կետի «ծառայողի» բառը՝ «ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

3) 2-րդ մասի 11-րդ կետի «ծառայության ծառայողներին» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ» բառերով:

**Հոդված 19.** Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել

«ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 1-ին մասի «ծառայության ծառայողն» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն» բառերով.

3) 1-ին մասի 5-րդ կետի «ծառայության» բառը փոխարինել «կատարած աշխատանքի» բառերով, իսկ 10-րդ կետի «ծառայության» բառը փոխարինել՝ «աշխատանքի» բառով.

4) 2-րդ մասի «ծառայության ծառայողը» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը» բառերով:

**Հոդված 20.** Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) վերնագրի և 1-ին մասի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 2-րդ մասի «Ծառայողի» բառը փոխարինել «Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով:

**Հոդված 21.** Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) վերնագրի, 1-ին, 2-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 1-ին մասի «երկարամյա ծառայության» բառերը փոխարինել «երկարամյա պաշտոնավարման» բառերով.

3) 3-րդ մասի «ծառայության ծառայողի նկատմամբ ծառայության» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ աշխատանքի» բառերով.

4) 8-րդ մասի «ծառայության» բառը փոխարինել «ծառայությունում» բառով, իսկ «ծառայողներին» բառը՝ «անձանց» բառով:

**Հոդված 22.** Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) վերնագրի, 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 1-ին մասի 6-րդ կետի «ծառայությունից» բառը փոխարինել «պաշտոնից» բառով:

**Հոդված 23.** Օրենքի 22-րդ հոդվածում՝

1) 3-րդ և 4-րդ մասերի «ծառայության ծառայողը» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը» բառերով.

2) 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով, իսկ 6-րդ կետի «ծառայողի» բառը փոխարինել «հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով:

**Հոդված 24.** Օրենքի 23-րդ հոդվածում՝

1) վերնագրի, 2-րդ, 7-րդ 8-րդ, 10-րդ և 16-րդ մասերի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 1-ին մասի «ծառայող» բառը փոխարինել «ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ» բառերով.

3) 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի, ինչպես նաև 4-րդ մասի «ծառայության ծառայողները» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք» բառերով, իսկ 3-րդ մասի 3-րդ կետի «ծառայությունից» բառը՝ «պաշտոնից» բառով.

4) 5-րդ և 6-րդ մասերի «ծառայողները» բառը փոխարինել «աշխատողները» բառով, իսկ «ծառայության» բառը՝ «աշխատանքի» բառով.

5) 7-րդ մասի «ծառայողի» բառը փոխարինել «հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

6) 9-րդ և 14-րդ մասերի «Ծառայողն» բառը փոխարինել «Հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն» բառերով.

7) 12-րդ մասի 4-րդ կետի «ծառայության ծառայողին» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին» բառերով.

8) 15-րդ մասի «Ծառայողի» բառը փոխարինել «Հատուկ քննչական ծառայու-թյունում պաշտոն զբաղեցնող անձի» բառերով, իսկ «ծառայության» բառը՝ «աշխատանքի» բառով:

**Հոդված 25.** Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 1-ին մասի «ծառայության» բառը փոխարինել «ծառայությունում» բառով, իսկ «ծառայողները» բառը՝ «անձինք» բառով.

3) 3-րդ մասի «հատուկ քննչական ծառայության ծառայողին վերապատրաստ-ման գործուղելու դեպքում ծառայողն» բառերը փոխարինել «հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին գործուղելու դեպքում անձը» բառերով.

4) 4-րդ մասի «ծառայության ծառայողներն» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք» բառերով:

**Հոդված 26.** Օրենքի 4-րդ գլխի վերնագրի «ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ» բառերը փոխարինել «ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՆՔՆԱՎԱՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ» բառերով:

**Հոդված 27.** Օրենքի 25-րդ հոդվածի վերնագրի և 1-ին մասի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով, իսկ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»» բառերը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»» բառերով:

**Հոդված 28.** Օրենքի 26-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 1-ին մասի «ծառայության ծառայողներն» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք» բառերով:

**Հոդված 29.** Օրենքի 27-րդ հոդվածի վերնագրի և 1-ին մասի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով, իսկ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» բառերը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» բառերով:

**Հոդված 30.** Օրենքի 28-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 1-ին մասի «ծառայության ծառայողներին» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով, իսկ 1-ին կետի «ծառայության» բառը՝ «աշխատանքի» բառով:

**Հոդված 31.** Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) վերնագրի և 4-րդ մասի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 1-ին մասի «ծառայության ծառայողն» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձն» բառերով, իսկ «ծառայության ծառայողներին» բառերը՝ «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով.

3) 4-րդ մասի «ծառայողի» բառը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով:

**Հոդված 32.** Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) վերնագրի «ծառայության ծառայողի» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի» բառերով.

2) 1-ին և 2-րդ մասերի «ծառայության ծառայողներին» բառերը փոխարինել «ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց» բառերով:

**Հոդված 33.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի ապրիլի 1-ից: